ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ -18/5» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 24 հունվարի 2018թ. Ժամը 11^00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա.Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում:
3. Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատում:
4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

2.ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

2.2 <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման մասով «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ-ի երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը գերազանցում է սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկից, իսկ հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3. Մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատում:

3.1 Ընդունել ի գիտություն, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) մեկ պայմանագիր, որի շրջանակներում մատուցված ծառայությունները գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների ցանկը՝ Հավելված 5 և 5.2 (այդ թվում մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ) պատճենները):

Հիմք ընդունելով 2.1, 2.2 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. «ՆՍԾՏԻԿ-ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՆԱՏԿ ՍԻՍՏԵՄՍ» ՍՊԸ -ին ճանաչել ընտրված մասնակից:

2.Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետ կիրառելի չէ:

4. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել կնքված պայմանագրի մասին հայտարարությունը:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

4.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	_____	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	_____	Թ. Զաքարյան
	_____	Ե. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Ա. Իսկանդարյան
	_____	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	_____	Ա.Պետրոսյան